ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հալիձորի անկումից հետո, մոտավորապես 1800 թվականներին ճյուղագրության մեջ նշված Մելիք-Փարսադանյանները բնակություն են հաստատում Բեխ գյուղում և ձեռք են բերում բազմաթիվ կալվածքներ։

1840 թ. Մելիք-Փարսադանյաններին մնում են Կապանի, Հալիձորի և Բեխի հողամասերը։ Նրանք կորցնում են մյուս կալվածքները, բացի պղնձահանքերից։

Այժմ այդ Մելիք-Փարսադանյանների տոհմը ունի 60 ընտանիք։ Նրանցից 40 ընտանիք ապրում են Բեխ գյուղում, իսկ 20 ընտանիք՝ Սովետական Միության տարբեր քաղաքներում, մեծ մասամբ Երևանում։

1. Մելիք-Փարսադանյան I ապրել է XVII դարում։ Ծննդյան և մահվան թվերը ստույգ հայտնի չեն։

2. Մելիք Բալի I նրա որդին էր։

3. Ստորև կարող ենք տալ ճյուղագրության մեջ նշված մի քանի անձնավորությունների ծննդյան և մահվան թվերը և պաշտոնները Մելիք-Փարսադանյան II հետո, որին ժողովուրդը անվանում էր «Լալա»։ Նա ապրել է մինչև 1770 թ., նրա ծննդյան թիվը անհայտ է։

4. Մելիք Օվանէսը, Մելիք Կալուստի ու Կարապետ բեկի հայրը իր ավագ որդուն՝

5. Մելիք Կալուստին համարում է թույլ, ապա ղեկավարությունը տալիս է Կարապետ բեկին։

Այնուամենայնիվ նա պահանջում է, որ իր ունեցած հողամասերի 2/3-ը ստանա Մելիք-Կալուստը, որպես ավագ որդի, իսկ 1/3-ը՝ Կարապետ բեկը, որպես կրտսեր, չնայած որ գործերը ղեկավարում էր Կարապետ բեկը։

«Մելիք» տիտղոսը ստանում էին միայն ավագ որդիք, մյուս եղբայրները ստանում էին «Բեկի» տիտղոսը։

6. Կարապետ բեկը 1790 թվականից ղեկավարում է ազգը։ Կարապետ բեկը մի քանի անգամ ընդհարումներ է ունենում պարսից խաների հետ և դուրս քշում նրանց Կապանի սահմաններից։ Ապրել է մոտ 75 տարի։

7. Կարապետ բեկի որդին՝ Սարգիս բեկը ծնվել է 1820 թ.։ Հանքի պաշտպանման ժամանակ տեղական թուրքերի դեմ, որոնք ուզում էին հանքը գրավել, սպանվում է ռուս չինովնիկների կողմից 1872 թ.։

8. Կարապետ-բեկի մյուս որդին՝ փոքր Դավիթ բեկը, Սարգիս բեկի փոքր եղբայրը, որպես սպա 1848 թ. մասնակցում է Բուդապեշտի գրավմանը։ Վերադառնալով հայրենիք, մահանում է Բեխ գյուղում մոտ 80 տարեկան հասակում։